«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«01» սեպտեմբերի 2020թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամներից 7-ը

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Բաբոյան Լուսինե
5. Բարսեղյան Գոռ
6. Դավթյան Նարեկ
7. Ղուկասյան Ալեն

Նիստին ներկա չէին

1. Սարդարյան Մերի

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը, հաշվապահ Մայրանուշ Թոխունցը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի հրավիրման ժամանակացույցի հարցը:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
3. 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման հարցը
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
4. Պակաս խտությամբ չորս առաջին դասարան ունենալու հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
5. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացումը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի հրավիրման ժամանակացույցի մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը նշեց, որ արդյունավետ քննարկումներին և հարցերին ճիշտ լուծումներ տալու համար նիստերն անհրաժեշտ է կազմակերպել ըստ սահմանված կարգի՝ առնվազն երեք ամիսը մեկ:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ առնվազն երեք ամիսը մեկ նիստերի անցկացումն ամրագրված է դպրոցի օրինակելի կանոնադրության 33-րդ կետի պահանջներին համապատասխան:

Որոշեցին՝ Դպրոցի կառավարման խորհրդի նիստերը գումարել առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

Լսեցին 3. 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց դպրոցի 2020-2021 ուսումնական տարվա առաջին

կիսամյակի տարիֆիկացիան, նշեց, որ այն կազմվելու համար հիմք են հանդիսացել նախնական և հիմնական դասաբաշխումները, ինչպես նաև սահմանված ձևանմուշին համապատասխան մյուս պահանջները:
Զեկուցողը նշեց նաև, որ հաշվի է առնել նաև ուսուցիչների ապահովվածությունը դասաժամերով և դրա հիման վրա նրանց կողմից սոցփաթեթից օգտվելը:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են դպրոցի տարիֆիկացիան և այն համապատասխանում է բոլոր պահանջներին:

Որոշեցին՝ Հաստատել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիան:

Լսեցին 4. Պակաս խտությամբ չորս առաջին դասարան ունենալու մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը մանրամասն ներկայացրեց առաջարկի նպատակը, նշեց, որ ունենալով 71 աշակերտ, հաշվի առնելով համավարակի պայմաններում առաջացած դժվարությունները, առաջին դասարանցիների համար ամենօրյա հաճախումների կարևորությունը, նրանց ուսուցումը պատշաճ կազմակերպելը՝ Դավիթ Կոստանդյանն առաջ քաշեց պակաս խտությամբ դասարաններ կոմպլեկտավորելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով հանրակրթության մասին օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետը:

Արտահայտվեցին՝ 1. Ն.Դավթյանը, Ա. Ղուկասյանը, Մ. Դանիելյանը, Մ. Թոխունցը
Նարեկ Դավթյան
Նա բոլորի ուշադրությունը հրավիրեց ֆինանսական հնարավորությունների վրա և առաջարկեց հաշվապահի հետ մեկ անգամ ևս քննարկել ֆինանսական խնդիրները. կատարել ճիշտ հաշվարկներ՝ հաշվի առնելով նոր աշխատատեղի առաջացման և հետագյում պահման խնդիրը: Քննարկվեց հայտարարված մրցույթի և նոր ուսուցիչներ ունենալու հարցը:
Ալեն Ղուկասյան
Նրա առաջարկով քննարկվեց երկհերթ ուսուցում կազմակերպելու (առաջին դասարանցիների համար) հարցը: Ներկայացվեցին դպրոցի շենքային պայմաններն ու հնարավորությունները:
Մ. Դանիելյան
Նկատի ունենալով ստեղծված համաճարակային պայմանները՝ կազմակերպել առաջին դասարացիների ամենօրյա հաճախումներ:
Մ. Թոխունց
Հաշվապահը ներկայացրեց ֆինանսական հաշվետվություն: Դպրոցն ունի ֆինանսական խնայողություններ, որոնց հաշվին կարող են պահել չորս առաջին դասարան

Որոշեցին՝ Հաշվի առնելով բուռն քննարկումների արդյունքում վեր հանված խնդիրները, լուծումներն ու հնարավորություններ՝ թույլատրել օրենքի շրջանակներում առաջին դասարանցիների համար ունենալ պակաս խտությամբ դասարան

Լսեցին 5. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացումը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը կարևորեց ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսուցման պրոցեսի պատշաճ իրականացումը, նրանց համար առարկայակն պարզեցումների իրականացումը, ԱՈՒՊ-ների պատշաճ կազմումը:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Խորհրդի անդամները նշեցին, որ դպրոցում միշտ պատշաճ կերպով է իրականացվել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքը, ինչի մասին փաստում են գրանցված արդյունքները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման մասին զեկուցումը։

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«16» նոյեմբերի 2020թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Բաբոյան Լուսինե
5. Բարսեղյան Գոռ
6. Դավթյան Նարեկ
7. Ղուկասյան Ալեն
8. Սարդարյան Մերի

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

2. Դպրոցի մարտահրավերներն ու խնդիրները:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Դպրոցի մարտահրավերների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Զեկուցողը նշեց, որ 2020 թվականի Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմական գործողությունների հետո անհրաժեշտ է համարում քննարկել դպրոցում պատերազմական իրավիճակներում, բնաձին, տարերային աղետների դեպքում անհրաժեշտ գործողությունների պլանի մշակումը և այդ իրավիճակներում համապատասխան հանձնարարականների նախատեսումը:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները ողջունեցին հարցի քննարկումը, ծավալվեց արդյունավետ քննարկում տվյալ օրակարգային հարցի շուրջ: Ներկաները հանդես եկան առաջարկություններով:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ներկայացված հարցի շուրջ քննարկումները, քայլեր ձեռնարկել անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«28» դեկտեմբերի 2020թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Բաբոյան Լուսինե
5. Բարսեղյան Գոռ
6. Դավթյան Նարեկ
7. Ղուկասյան Ալեն

Նիստին ներկա չէին

1. Սարդարյան Մերի

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. 2020-2021 ուսումնական տարվա ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին հավելավճար տալու մասին հարցը։
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը։

Լսեցին 2. 2020-2021 ուսումնական տարվա ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին հավելավճար տալու մասին հարցը։
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց պատերազմական իրավիճակներում կատարված աշխատանքը, կոլեկտիվի անմիջական մասնակցությունը՝ թիկունքում իրականացվող բոլոր տիպի աշխատանքներին։
Դպրոցի աշխատողների կողմից ցուցաբերված բարեխիղճ, պարտաճանաչ և համագործակցված աշխատանքն հաշվի առնելով, կառավարման խորհրդի նախագահ՝ Մենուա Հովսեփյանն առաջարկեց հավելավճար տրամադրել աշխատողներին՝ աշխատավարձի 100% -ի չափով։

Արտահայտվեցին՝ Ն. Դավթյանը, Գ. Բարսեղյանը
Արտահայտվողները համաձայնեցին զեկուցողի դիրքորոշումների հետ, առաջարկեցին տալ հավելավճար՝ հաշվի առնելով դպրոցի հնարավորությունները։

Որոշեցին՝ 2020-2021 ուսումնական տարվա ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին տալ հավելավճար։

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«25» հունվարի 2021թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Աղավելյան Տաթևիկ
5. Բարսեղյան Գոռ
6. Դավթյան Նարեկ
7. Ղուկասյան Ալեն

Նիստին ներկա չէր

1. Սարդարյան Մերի

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը, հաշվապահ Մայրանուշ Թոխունցը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. 2021 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
3. 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2021 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը ներկայացրեց 2021 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակը.
1. Աշխատավարձ – 102389,0
2. Էլեկտրաէներգիա – 1,200,0
3. Գազ – 3500,0
4. Կոմունալ ծառայություն – 120,0
5. Կենցաղային և հանրային – 7500,0
6. Շենքի կապիտալ վերանորոգում – 5000,0
7. Վարչական սարքավորումներ – 900,0
8. Մեքենաներ և սարքավորումներ – 900,0
9. Ոչ նյութական հիմնական միջոցներ – 900,0
10. Այլ ծախսեր – 5591,0

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Կառավարման խորհրդի անդամներն առաջարկեցին հավանություն տալ բյուջեի նախագծի նախնական տարբերակին:

Որոշեցին՝ Հաստատել բյուջեի նախագծի նախնական տարբերակը:

Լսեցին 3. 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի

քննարկման և հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը ներկայացրեց դպրոցի 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիան, նշեց, որ այն կազմվելու համար հիմք են հանդիսացել նախնական և հիմնական դասաբաշխումները, ինչպես նաև սահմանված ձևանմուշին համապատասխան մյուս պահանջները։

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են դպրոցի տարիֆիկացիան և այն համապատասխանում է բոլոր պահանջներին։

Որոշեցին՝ Հաստատել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիան։

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«19» մարտի 2021թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները

1. Հովսեփյան Մենուա (նախագահ)
2. Դանիելյան Մերի (քարտուղար)
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Աղավելյան Տաթևիկ
5. Բարսեղյան Գոռ
6. Դավթյան Նարեկ
7. Ղուկասյան Ալեն
8. Սարդարյան Մերի

Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
2. Դպրոցի ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասնակցության մասին քննարկում:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Դպրոցի ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասնակցության մասին քննարկման հարցը:
(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)
Զեկուցողը կարևորեց ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացին մասնակցությունը, նշեց, որ 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցից պարտադիր վերապատրաստմանը պետք է մասնակցեն այն ուսուցիչները, ովքեր վերջին 5 տարիներին չեն մասնակցել կամ մինչ այդ երբեք չեն վերապատրաստվել:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները կարևորեցին պարտադիր վերապատրաստման գործընթացը, քանի որ այն հնարավորություն է տալիս ծանոթանալ կատարվող փոփոխություններին ու նորամուծություններին և կատարել փորձի փոխանակում:

Որոշեցին՝ Ապահովել ուսուցիչների մասնակցությունը կազմակերպվող պարտադիր վերապատրաստումներին:

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

«27» մայիսի 2021թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 8 անդամները

1. Հովսեփյան Մենուա
2. Դանիելյան Մերի
3. Պետրոսյան Մարգարիտա
4. Հովհաննիսյան Մանե
5. Մկրտչյան Սերժիկ
6. Ասրյան Հենրիկ
7. Ավանեսյան Կարո
8. Ղուլունց Վիգեն

Նիստին ներկա չէր

1. Աղավելյան Տաթևիկ

Նիստը նախագահում էր տարիքով ավագ Սերժիկ Մկրտչյանը:
Նիստին մասնակցում էին դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Մկրտչյան)
2. Տարածքային կառավարման մարմնի կողմից հաստատված խորհրդի կազմի ներկայացման և դպրոցի կառավարման խարհրդի նախագահի և քարտուղարի ընտրության հարցը:
(զեկուցող՝ Ս. Մկրտչյան)
3. Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի հրավիրման ժամանակացույցի մասին
(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)
4. Ուսուցչի թափուր տեղի մրցույթի օրինակելի կարգի քննարկում:
(զեկուցող՝ Դ.Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Մկրտչյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Տարածքային կառավարման մարմնի կողմից հաստատված խորդի կազմի ներկայացման և դպրոցի կառավարման խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրության մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Մկրտչյան)
Զեկուցողը ներկայացրեց կառավարման խորհրդի նոր 9 (ինը) անդամների անվանական կազմը՝
1. Դանիելյան Մերի
2. Պետրոսյան Մարգարիտա
3. Աղավելյան Տաթևիկ
4. Հովհաննիսյան Մանե
5. Հովսեփյան Մենուա
6. Մկրտչյան Սերժիկ
7. Ասրյան Հենրիկ
8. Ավանեսյան Կարո
9. Ղուլունց Վիգեն

Արտահայտվեցին՝ Նիստի անդամները ծանոթացան միմյանց հետ և հակիրճ ներկայացրեցին կենսագրական որոշ տվյալներ:
Խորհրդի անդամներ՝ Մերի Դանիելյանը և Մարգարիտա Պետրոսյանը

առաջադրեցին Մենուա Հովսեփյանի թեկնածությունը՝ որպես նախագահ:
Առաջադրվեց նաև Սերժիկ Մկրտչյանի թեկնածությունը՝ Կարո Ավանեսյանի կողմից: Ս. Մկրտչյանը ինքնաբացարակ հայտնեց:
Մենուա Հովսեփյանի անունը գրանցվեց քվեաթերթիկներում և անցկացվեց փակ (գաղտնի) քվեարկություն:
Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝
1. Մերի դանիելյան
2. Սերժիկ Մկրտչյան
Նախագահի թեկնածության քվերարկության արդյունքներն էին՝ 6 կողմ , 2 դեմ:
Մենուա Հովսեփյանն ու Մարգարիտա Պետրոսյանը նշեցին, որ հաշվի առնելով քարտուղարի փորձը և կատարած աշխատանքը՝ առաջարկում են Մերի Դանիելյանի թեկնածությունը՝ որպես քարտուղար: Առաջարկը անցավ միաձայն:

Որոշեցին՝ 1. Հաստատել կառավարման խորհրդի նախագահի ընտրության արդյունքները: Խորհրդի նախագահ ընտրվել Մենուա Հովսեփյանին:
2. Դպրոցի կառավարման խորհրդի քարտուղար ընտրել Մերի Դանիելյանին:

Լսեցին 3. Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի հրավիրման ժամանակացույցի մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

Զեկուցողը նշեց, որ արդյունավետ քննարկումներին և հարցերին ճիշտ լուծումներ տալու համար նիստերն անհրաժեշտ է կազմակերպել ըստ սահմանված կարգի՝ առնվազն երեք ամիսը մեկ:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողները նշեցին, որ առնվազն երեք ամիսը մեկ նիստերի անցկացումն ամրագրված է դպրոցի օրինակելի կանոնադրության 33-րդ կետի պահանջներին համապատասխան:

Որոշեցին՝ Դպրոցի կառավարման խորհրդի նիստերը գումարել առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

Լսեցին 4. Ուսուցչի թափուր տեղի մրցույթի օրինակելի կարգի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Դավիթ Կոստանդյանը ներկայացրեց ուսուցչի թափուր տեղի մրցույթի օրինակելի կարգը, դրանում տեղ գտած փոփոխությունները և առաջարկեց քննարկել այն և երաշխավորել գործածության:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները
Արտահայտվողներն անդրադարձ կատարեցին փոփոխություններին, նշեցին, որ դրանք հնարավորություն կտան ավելի իրատեսական ընտրություն կատարել և ընտրել կոմպետենտ ուսուցիչների:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ուսուցչի թափուր տեղի մրցույթի օրինակելի կարգի

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Կառավարման խորհրդի արձանագրությունների ամփոփման

2020-2021 ուսումնական տարվա ընթացքում *Կառավարման խորհուրդը* գումարել է 6 *հերթական նիստ*, որոնց համար կազմվել է 6 *արձանագրություն:*

Կառավարման խորհուրդը նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	01.09.2020թ.	5
2	2	16.11.2020թ.	2
3	3	28.12.2020թ.	2
4	4	25.01.2021թ.	3
5	5	19.03.2021թ.	2
6	6	27.05.2021թ.	4

Կառավարման խորհուրդի սույն արձանագրությունների մատյանը կազմված է *10* էջից։

Խորհրդի նախագահ՝ _____ Մ. Հովսեփյան

Քարտուղար՝ _____ Մ. Դանիելյան

«27» մայիսի 2021թ.